

<http://henaran.am/?p=27875>

## Այս հարցում Հայաստանը զիջում է միայն Թուրքիային

Ավելացվել է [henaran3](#) կողմից 12:45 Հունիս 29, 2011 12:45 այստեղ՝ [ՀԱՅԱՍՏԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ](#) |



“Տարածաշրջանի երկրների համեմատ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի վիճակը շատ լավ է: Մենք ունենք բավականին խրախուսող օրենսդրական դաշտ: 2003-2004 թթ մինչ այժմ 13 փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիա է տրվել: Սա շատ գրավիչ ցուցանիշ է”,-այսօր “Հենարան” մամուլի ակումբում ասել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը:

Թամարա Բաբայանի խոսքով, սահմանափակ բնական պաշարներ ունեցող Հայաստանը վերականգնվող էներգետիկայի շատ լուրջ ներուժ ունի, ինչն անհրաժեշտ է օգտագործել:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող Արայիկ Մարջանյանն ասաց, որ մինչեւ վերջերս Հայաստանը տարածաշրջանում առաջինն էր, այժմ զիջում է միայն Թուրքիային:

Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության մեջ հիդրոկայաններից եւ վերականգնվող էներգետիկայից ստացված էլեկտրաէներգիան 32 տոկոս է կազմում: Մասնագետների խոսքով, սա բարձր ցուցանիշ է: “Այս պահին միայն փոքր ՀԷԿ-երը տալիս են մեր ողջ էլեկտրաէներգիայի արտադրանքի մոտ 5 տոկոսը, ինչը բացառիկ ցուցանիշ է”,-ասաց Արայիկ Մարջանյանը:

Նա հավելեց, որ էներգետիկա ասելով նկատի պետք է ունենանք ոչ միայն էլեկտրական էներգիան, այլև ջերմությունը եւ տրանսպորտը: Այս երեք ոլորտներում, մասնագետի հավաստիացմամբ, վերականգնվող էներգետիկան էական կարող է լինել:

Համաշխարհային բանկի եւ ՀՀ կառավարության համատեղ ծրագրի շրջանակներում 20 առանձին փոքր ծրագրեր են իրականացվում վերականգնվող էներգետիկայի տարբեր ասպարեզներում՝ փոքր ՀԷԿ-եր, հիդրոակումուլյացիոն կայաններ, երկրաջերմային եւ արեգակնային էներգետիկա: Ծրագրի իրականացմանը մասնակցել են 124 առաջատար փորձագետներ, որոնցից 100-ը՝ արտերկրից:

“Բավական բարդ, բազմապրոֆիլ եւ համալիր արդյունքներ ստացվեցին”,-ասաց Արայիկ Մարջանյանը: Թամարա Բաբայանը հավելեց, որ ծրագրի շնորհիվ ֆինանսավորվել են 26 փոքր ՀԷԿ-երի կառուցումը: Այդ նպատակի համար ՀԲ-ն կառավարությանը 5 մլն դոլար էր հատկացրել: Եվս 3 մլն դոլար հատկացրել է “Գաֆեսճյան” հիմնադրամը, 7 մլն դոլար էլ՝ ՎՋԵԲ-ը:

Հիմնադրամի ուսումնասիրություններն ամփոփվել են համապատասխան ուղեցույցում, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ծանոթանալ Հայաստանի մազրերի վերականգնվող էներգետիկ պոտենցիալին: Հայաստանում փոքր ՀԷԿ-երի արտադրության պոտենցիալն առավելապես իրացված է Լոռու եւ Սյունիքի մարզերում, Տավուշը, մասնագետների խոսքով, շատ մեծ ռեսուրսներ ունի, որը կարելի է օգտագործել:

Ինչ վերաբերվում է բնապահպանական խնդիրներին, Թամարա Բաբայանի խոսքով, հիմնադրամն ունի Բնապահպանական կառավարման պլան, որի չափանիշների պահպանումը պարտադիր է բոլոր ներդրողների համար:

Հավելենք, որ Հայաստանում վերականգնվող էներգետիկ պաշարներից ամենաշատն այսօր օգտագործվում են հիդրոպաշարները: Ամբողջ հիդրոներուժի իրացումը հնարավոր է ապահովել՝ օգտագործելով գոյություն ունեցող երկու՝ Սեւան-Հրազդանի եւ Որոտանի խոշոր հիդրոէլեկտրակայանների համալիրը, Ձորա ՀԷԿ-ը, ինչպես նաեւ կառուցելով երեք նոր միջին հզորության ՀԷԿ-եր եւ յուրացնելով փոքր ՀԷԿ-երի ներուժը: